

**ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱ ԵՒ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ
ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ 1945ԻՆ
ԿԱՏԱՐՈՒԱԾ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՔԸ
ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՎԱԻԵՐԱԹՈՒՂԹ ՄԸ՝**

ԶԱԻԷՆ ՄՍԸՐԼԵԱՆ

1945 թուականի սկիզբներուն, Ստալինկրատի եւ էլ Ալամէյնի ճակատամարտերուն պարտուած Երրորդ Ռայխը, Արեւմտեան Դաշնակիցներու Նորմանտի ցամաքահանումէն ետք տակաւին կը տոկար, թէ եւ իր ճակատագիրը վճռուած էր արդէն: Արտէնի գերմանական վերջին յարձակողականին ալ ձախողութենէն ետք, միայն քանի մը ամիսներու հարց էր Նացի Գերմանիոյ անձնատուութիւնը: Դաշնակիցները արդէն կը ծրագրէին յետ-պատերազմեան կարգավիճակը Եւրոպայի եւ կազմութիւնը Միացեալ Ազգերու Կազմակերպութեան: Կը գումարուէր Եալթայի խորհրդաժողովը Ստալինի, Ռուզվելթի եւ Չըրչիլի մասնակցութեամբ, 4էն 11 Փետրուար 1945ին:

Խորհրդային Միութիւնը, որուն Կարմիր Բանակը հասած էր Պերլինի դռներուն եւ գրաւած ու նացի լուծէն ազատած էր Արեւելեան Եւրոպայի երկիրները, պատերազմին տուած էր 20 միլիոն զոհ: Խորհրդային Միութիւնը, բաց աստի, 128 միլիար տոլարի վնաս կրած էր ստացուածքներու կորուստով, ներառեալ՝ 1700 քաղաքներու, 70,000 գիւղերու եւ ավաններու, 31,000 գործարաններու, 84,000 դպրոցներու, եւ 40,000 մղոն շոգեկառքի գիծերու, 7 միլիոն ձիերու, 17 միլիոն անջարագլուխի, 20 միլիոն խոզերու կորուստէն զատ: Այս կլոր թիւերով տրուած կորուստները Խորհրդային Միութեան ընդհանուր ստացուածքին մէկ քառորդն էին: Խորհրդային Միութեան ղեկավարութիւնը իրրեւ պատերազմի գլխաւոր յաղթականներէն մին, ամէն ջանք կը թափէր որպէս յաղթանակի պտուղ առաւելագոյնը քաղելու, մանաւանդ՝ սրբագրելու եւ ընդարձակելու իր սահմանները, յատկապէս Համաշխարհային Ա. պատերազմին Հոկտեմբերեան Յեղափոխութեան ու ավա Ռուսիոյ քաղաքացիական պատերազմին պատճառաւ իր կորսնցուցած հողամասերուն տիրանալու, վերահաստատել փորձելով նախքան 1914ի Ռուսական կայսրութեան պետական սահմանները: Աւելին, ան կ'ուզէր իր քաղաքական ազդեցութեան ենթարկել Արեւելեան Եւրոպայի երկիրները, օգտուելով այդ երկիրները նացի լուծէն ազատագրելու համար հոն հասած Խորհրդային բանակի ներկայութենէն: Առաւել խՍՀՄ կը

փորձէր Պարսկաստանի հիւսիսային մասին մէջ քրտական եւ ազերիական պետութիւններ ստեղծել, կրկին օգտուել փորձելով Կարմիր Բանակի այդ շրջանը գտնուելէն:

Այսպէս, Խորհրդային Միութիւնը վերատիրացաւ, նախապէս ցարական Ռուսիոյ ենթակայ, իսկ 1918–1939 իրենց անկախութիւնը պահած պայթեան երկիրներուն՝ Լիթուանիոյ, Լատվիոյ եւ էսթոնիոյ, որոնք Խորհրդային Հանրապետութիւններ դարձան: Ֆինլանտայի հետ 1944ին կնքուած զինադադարի համաձայնութեամբ վերահաստատուեցան Ֆինլանտա–Խորհրդային Միութիւն 1940ի սահմանները եւ այսպիսով Խորհրդային Միութեան անցան Փեցամօ եւ Արեւելեան Քարելիոյ մէկ մասը: Երեք մեծերու՝ Ռումանիոյ հետ 1944ին ստորագրած զինադադարի համաձայնութեամբ Խորհրդային Միութիւն Ռումանիայէն ստացաւ Պեսարապիոյ եւ Հիւսիսային Պուրովինայի հողամասը: Եայթայի Խորհրդաժողովին որոշուեցաւ որ Խորհրդային Միութեան եւ Լեհաստանի սահմանը ըլլայ 22 Յունիս 1941ի Խորհրդային Միութիւն – Լեհաստան սահմանը, այսինքն նախապատերազմեան Լեհաստանի արեւելեան շրջաններու ընդարձակ հողամասեր մնացին Խորհրդային Միութեան: Պարտուած Գերմանիոյ Արեւելեան Փրոսիոյ հողամասին շուրջ կէսը՝ Քէօնիկզպրկ քաղաքն իր շրջակայ տարածութիւններով, անցաւ Խորհրդային Միութեան: Չխոսյովաքիան Խորհրդային Միութեան զիջեցաւ ենթա–Քարփաթեան շրջանը: Իսկ Ծայրագոյն Արեւելքի մէջ, Փոցտամի Խորհրդաժողովէն (17 Յուլիս–2 Օգոստոս 1945) ետք, Խորհրդային Միութիւնը 8 Օգոստոսին, Ճափոնի դէմ մղուող պատերազմին մտաւ, Մանչուրիա ներխուժելով, երբ Մ. Նահանգներու յաղթանակը արդէն ապահովուած էր, աթոմական ուժերին Հիրոշիմայի վրայ, 6 Օգոստոս 1945ին գործած աւերով: Դարասկիզբի Ռուս–Ճափոնական պատերազմին հետեւանքով Ռուսիոյ կորսնցուցած Հարաւային Սախային կղզին, առաւել Քուրիլեան կղզիները, կցուեցան Խորհրդային Միութեան: Կը մնար վերադառնալ նախկին Ռուսական կայսրութեան եւ Օսմանեան կայսրութեան 1914ին ունեցած պետական սահմաններուն: Ահա այս ծիրէն ներս նկատելու է Խորհրդային Միութեան պահանջը Կարս–Արտաշանին: Թերեւս կար միտում մը գոհացնելու Խ. Միութեան բաղկացուցիչ Հանրապետութիւններէն Ռուսիան, Ուքրանիան, Պելոուսիան, Մոլդաւիան, Հայաստանը, Վրաստանը ու Ազրպէյճանը որոնց զօրարածինները կուռած էին նացի գերմանիոյ դէմ մեծաթիւ զոհեր տալով:

Խորհրդային Միութիւնը արդար պատճառ ունէր Թուրքիոյ դէմ քայքայեալ առնելու: Արդարեւ, թէ եւ Թուրքիան Համաշխարհային Բ. պատերազմին պաշտօնապէս ինքզինք չէզոք յայտարարած էր, Խորքին մէջ կը վարէր կեղծապատիր քաղաքականութիւն մը: Նացի Գերմանիոյ՝ Խորհրդային Միութեան վրայ ուխտադրուժ նախաշարժակումէն չորս օրեր առաջ Թուրքիա եւ Գերմանիա 18 Յունիս 1941ին կնքած էին բարեկամութեան դաշնագիր: Պատերազմին շրջանին Թուրքիա ոչ միայն արտօնեց գերման եւ իտալական ռազմանաւերու մուտքը Սեւ Ծով, այլեւ Խորհրդային Միութեան տկարութեան օրերուն մեծապէս շահագրգռուեցաւ Գերմանիոյ դադտնաբար կատարած խայծին թէ Խորհրդային Միութենէն որոշ «թուրքերէ բնակուած» հողամասեր կրնային առա-

չարկուել թուրքիոյ, եթէ թուրքիան Գերմանիոյ կողմը զիրքորոշուէր²։ Թուրքիան ոչ միայն ուրախ էր որ Գերմանիա Խորհրդային Միութեան վրայ յարձակած էր, այլեւ սկսած էր բացայայտօրէն քաջալերել փան-թուրանականները, եւ զօրք կեդրոնացնել Խորհրդային Միութեան սահմանը։ 1941-42 թուականներուն Լենինականի, Իգտիրի, Ախալքալաքի եւ Պաթումի ուղղութիւններով ստեղծուած էր թրքական յարձակման իրական վտանգ³։ 1942ի ամրան, երբ Կովկասի պաշտպանողական մարտերը սկսան ընդդէմ գերման յարձակողականին, թուրքիա կը սպասէր Գերմանիոյ յաղթանակին որպէսզի ներխուժէր Անդրկովկաս, ընդ որում՝ Խորհրդային Հայաստան։ Հայութեան համար այդ ներխուժումը կրնար նշանակել 1915-23ի ցեղասպանութեան ամբողջացումը։

Յետ-պատերազմեան գերման վաւերաթուղթերէն յայտնի եղաւ թէ թուրքիա ծրագրած էր Խորհրդային Միութեան վրայ յարձակիլ կովկասեան ճակատէն, Պաքուն գրաւելու նպատակով, 1942ի Նոյեմբերին, անգամ մը որ Գերմանիան յայտարարէր Ստալինկրատի անկումը⁴։

Արդարեւ, 1942ի աշնան, թրքական 26 զօրաբաժիններ, շուրջ մէկ միլիոն զինուորներով, կեդրոնացան Խորհրդային-թրքական անդրկովկասեան սահմանի երկայնքին, ակնկալելով որ Ստալինկրատը ինչա՞ր⁵։ Խորհրդային Միութիւնը հարկադրաբար Անդրկովկասի մէջ բաւականաչափ զինուորական ուժ պահեց, մինչ այլ ճակատներու վրայ անոնց կարիքը ունէր։ 1943ի Փետրուարին Գերմանիա անձնատուր եղաւ Ստալինկրատի մէջ։

Հակառակ Խորհրդային Միութեան Ստալինկրատի մէջ եւ այլ ճակատներու վրայ արձանագրած յաջողութիւններուն, թուրքիա Մայիս-Յունիս 1944ին կ'արտօնէր գերման ռազմանաւերու Սեւ ծով անցքը, քրոմ կը հայթայթէր Գերմանիոյ, տուն տալով Խորհրդային Միութեան բողոքագիրքերուն։

Արեւմտեան Դաշնակիցներու Նորմանտիի յաջող ցամաքահանումէն եւ Կարմիր Բանակի արձանագրած նոր նուաճումներէն ետք, թուրքիա 2 Օգոստոս 1944ին խզեց Գերմանիոյ հետ իր յարաբերութիւնները, բայց պատերազմի չմտաւ, եւ այ՛ հակառակ ճնշումին Դաշնակիցներու, որոնք այս հարցը քննած էին Թեհրանի խորհրդաժողովին (28 Նոյեմբեր-1 Դեկտեմբեր 1943)։

Ելլալի խորհրդաժողովին երբ կը քննուէր ՄԱԿի անդամակցութեան հարցը եւ որոշուած էր իբրեւ հիմնադիր անդամ ընդունիլ Գերմանիոյ դէմ պատերազմ յայտարարած երկիրները, Չրըչիլի պնդումով Ստալին տեղի տուած էր, յայտնելով որ եթէ մինչեւ Փետրուար 1945ի վերջը, թուրքիա Գերմանիոյ դէմ պատերազմ յայտարարէ կրնայ ՄԱԿի հիմնադիր անդամ ըլլալ⁶։ Ա.Մ.Ն. եւ Մեծն Բրիտանիա համոզեցին թուրքիան՝ վերջինս միայն 23 Փետրուարին Գերմանիոյ եւ Ճափոնի դէմ պատերազմ յայտարարեց, եւ ՄԱԿի հիմնադիր անդամ եղաւ։

Խորհրդային Միութիւնը իսկապէս նեղուած պատերազմի ընթացքին թուրքիոյ կողմէ Մոնթրէօի նեղուցներու վերաբերեալ համաձայնագիրը ի նպաստ Գերմանիոյ խախտելէն եւ այլ հակա-խորհրդային քայլերէն, եւ հետամուտ պատերազմի վերջին շրջանի խորհրդային ընդհանուր քաղաքականութեան ծրագիրներուն՝ Խորհրդային Միութեան արտաքին գործոց նախարար

4. Մոլոթովի բերնով, Մոսկուայի մօտ թուրք դեսպան Սելիմ Սարփէրին, 19 Մարտ 1945ին, յայտնեց թէ՝ Խորհրդային Միութիւնը մտադիր է չեղեալ համարել 1925 թուականին Թուրքիոյ հետ ստորագրած ոչ-յարձակողական եւ բարեկամութեան դաշնագիրը, զայն ժամանակավրէպ նկատելով ու նոր քաղաքական դաշինք մը պահանջեց: Թուրքիա իր պատրաստակամութիւնը յայտնեց քննարկելու խորհրդային որեւէ առաջարկ՝ նոր դաշնագրի մը կնքումին համար⁷:

Գերմանիոյ գէմ պատերազմի յաղթական աւարտէն կարճ ժամանակ ետք, 20 Մայիսին Խորհրդային Միութիւնը խզեց Թուրք-խորհրդային դաշնագիրը: Իսկ 7 Յունիսին Մոլոթով դեսպան Սարփէրին յայտնեց թէ Խորհրդային Միութիւն կը փափաքի վերատեսուցեան ենթարկել երկու պետութիւններուն միջեւ եղած սահմանագիծը Կարսի եւ Արտահանի շրջանին մէջ եւ վերատեսուցեան ենթարկել Մոնթրօէի համաձայնագիրը⁸: 18 Յունիսին Մոլոթով Սարփէրի յայտնեց թէ, նոր «գործակցութեան եւ դաշնակցութեան», դաշնագիր մը պէտք է գոյացնէին 7 Յունիսին առաջարկուած կէտերուն հիմամբ, աւելցնելով թէ Խորհրդային Հայաստան Տողի կարիք ունի⁹: 22 Յունիսին Խորհրդային Միութեան Անքարայի մօտ դեսպան Վինոկրատովը, Փոցտամի խորհրդաժողովէն քանի մը շաբաթ առաջ, թրքական կառավարութեան յայտնեց թէ Խորհրդային Միութիւնը պատրաստ է նոր բարեկամութեան դաշնագիր մը կնքելու Թուրքիոյ հետ՝ եթէ նեղուցներու վերահսկողութեան վերաբերեալ Մոնթրօէի համաձայնագիրը, ըստ որոչ պահանջներու, վերատեսուցեան ենթարկուէր եւ եթէ Կարս, Արզուին եւ Արտահան Խորհրդային Միութեան վերադարձուէին¹⁰: Ըստ թուրք չեղինակ Ալթան Տելիորմանի՝ Վինոկրատով նշած է թէ այդ հողերը պէտք են ոչ թէ Խորհրդային Ռուսիոյ այլ Հայկական Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան, քանի որ ան շատ փոքր է տարածութեամբ¹¹:

Փոցտամի խորհրդաժողովի նախօրեակին, 16 Յունիս 1945ին բրիտանական արտաքին գործոց նախարար Էնթոնի Իտըն եւ Խորհրդային արտաքին գործոց նախարար Մոլոթով զրոյց մը կ'ունենան Խորհրդային Միութեան հողային պահանջի հարցով: Ըստ պաշտօնական ատենագրութեան, Մոլոթով ըսած է. «1921 թուականին թուրքերը օգտուեցան այն իրողութենէն, որ Խորհրդային Միութիւնը թույլ էր եւ խլեցին Խորհրդային Հայաստանի մէկ մասը: Սովետական Միութեան հայերը վիրաւորուած կը զգան: Այդ հանգամանքները նկատի ունենալով՝ Խորհրդային կառավարութիւնը հարց յարուցաներ է օրինական եղանակով վերադարձնել Խորհրդային Միութեան պատկանող հողամասերը»¹²:

Փոցտամի խորհրդաժողովի 22 Յունիսի նիստին Ստալին, Չըրչիլ եւ Թրումըն քննեցին Խորհրդային Միութեան հողային պահանջները Թուրքիայէն: Հոն Մոլոթով յայտնեց թէ Թուրքիայէն առաջարկ եկած էր նոր դաշինք կնքելու եւ Խորհրդային Միութիւն պայման դրած էր որ Թուրքիոյ հետ իր սահմանագիծը, որ անարդար էր, փոխուէր քանի 1921 թուականին Խորհրդային Հայաստանէն եւ Խորհրդային Վրաստանէն անջատուելէն Կարսի, Արտահանի եւ Արզուինի մարզերը եւ այդ հողամասերը պէտք էր վերադարձուէին իրենց տէրերուն¹³: 23 Յունիսին այլ Ստալին իր կարգին աւելցուցած էր «Թուրքերուն վախը կը ծնէր ճշդ ումէն այն սահմաններուն, որոնք գոյութիւն ունէին

ցարական կառավարութեան օրերուն [այսինքն 1914ի պետական սահմանները — Չ.Մ.], յայտնելով թէ ինքնկատի ունէր Կարսը՝ որ նախապէս մաս կը կազմէր Հայաստանին եւ Արտասանը՝ որ նախապէս ենթակայ էր Վրաստանին»։ Անդրադարձ եղած էր նաեւ նեղուցներու հարցին։ Ստային եզրակացուցած էր թէ եթէ թուրքերուն ընդունելի չէին ասոնք, իրենք պիտի լքէին դաշնագրութեան մը հարցը¹⁴։

Էջմիածնի ազգային—եկեղեցական ժողովէն (16—26 Յունիս 1945) սկսած, համայն հայ սփիւռքը իր կուսակցութիւններով եւ ալլազան կազմակերպութիւններով, յուշագիրերով եւ հրապարակային միջիններով, կը պահանջէր Թուրքիոյ կողմէ բռնազրաւուած հայկական հողերուն կցումը Խորհրդային Հայաստանին, յաճախ Կարս—Արտասանի պահանջէն անդին անցնելով եւ պահանջելով Ուխտընեան սահմաններով ճշդուած բռնազրաւեալ Արեւմտեան Հայաստանի կցումը Խորհրդային Հայաստանին։

Երբ 7 Սեպտեմբեր 1945ին, Հ.Յ. Դաշնակցութեան Գերագոյն Մարմինը կողմէ յուշագիր մը ներկայացուեցաւ բրիտանական արտաքին գործոց նախարարին, նմանակը այն յուշագիրերուն զորս Մարմինը յանձնած էր Ամերիկայի Միացեալ Նահանգներու, Խորհրդային Միութեան, Ֆրանսայի եւ Զինաստանի արտաքին գործոց նախարարներուն, Հինգերու Խորհուրդի ժողովի նախորեակին, Լոնտոն 20 Սեպտեմբերին վճռեց՝ «նոյնիսկ ստացումը նշող ոչ մէկ պատասխան պէտք է ըլլայ, բայց թերեւս մենք պէտք է պատրաստուինք լսելու այս հարցին արժարժումը յառաջիկայ խորհրդաժողովին»¹⁵։

Յուշագիրին գլխաւոր կէտը հետեւեալն էր․ «Ի սփիւռս աշխարհի ցրուած հայերուն միջեւ բացարձակ միաձայնութիւն կը տիրէ այս կենսական հարցի մասին եւ անոնք վստահօրէն կը յուսան եւ կ'ակնկալեն նորին վեհափառութեան կառավարութիւնը [այսինքն Մեծն Բրիտանիան—Չ.Մ.] եւ [Ամերիկայի] Միացեալ Նահանգներու կառավարութիւնը յարմար պիտի դատեն կատարեալ համաձայնութեամբ շարժիլ Խորհրդային Միութեան կառավարութեան հետ, երբ այս վերջինս պահանջ ներկայացնէ թրքական նահանգները միացնելու սահմանակից Խորհրդային Հայաստանին։ Այն ատեն, այս վերջինս պիտի դառնայ,—ինչպէս բոլոր հայերու ջերմ բաղձանքն է,— հողային տեսակէտով ամբողջական եւ անբաժանելի պետութիւն մը՝ Սովետական Ընկերավարական Հանրապետութեանց Միութեան մէջ»¹⁶։

Յորէյն Օֆիսի ատենագրութեան մէջ կը նշուի թէ պէտք է հայկական յուշագիրը արտաքին գործոց նախարարներու խորհրդաժողովին բրիտանական պատուիրակութեան թղթածրարին մէջ դրուի, քանի «գլխաւորաբար կարեւոր է Թուրքիոյ նկատմամբ»¹⁷։ Պաշտօնատար մը ատենագրութեան մէջ գրած է «ԱՄՆի մէջ հայկական կազմակերպութիւն մը [այս] նիւթին վրայ յուշագիր մը ղրկած էր [ՄԱԿի հիմնադիր] Սան Ֆրանսիսքոյի խորհրդաժողովին, բայց ոչ մէկ ուշադրութիւն տրուած էր։ Մենք խորհրդային կառավարութեան ըսած ենք թէ չենք վաւերացներ այս պահանջները դնելու իրենց ձեւը, եւ Փոցտամի մէջ զգացում էր թէ խորհրդային կառավարութիւնը հաւանօրէն միայն, զօրաւորապէս պիտի թելադրէր ասոնք իր Թուրքիոյ հետ իր գինակցութեան նախա-

պայման, եթէ Թուրքիան ուզէր [զինակցութիւն մը]: Թրքական կառավարութիւնը անկից ետք յայտնած էր թէ չ'ուզեր, զէթ թեյադրուած գինով: Խորհրդային մամուլին ու ձայնասփռութիւն մէջ քարոզչութիւնը շարունակուած է, բայց հարցը անգամ մըն ալ չէ յիշուած խորհրդային եւ թուրք կառավարութիւններուն միջեւ»: Պաշտօնատարը կը նկատէր որ կարելի է, բայց ոչ հաւանական, որ Խորհրդային Միութիւնը այս հարցը արծարծէ խորհրդաժողովին եւ թէ այս հարցը իր կարգին օր մը կրնայ գալ ՄԱԿի առջեւ, ուստի կ'եզրակացնէ՝ «ես կը խորհիմ թէ առաջին բանը որ պէտք է ընենք՝ մեր միտքը յստակացնել է խորհրդային պահանջին ճիշդերուն եւ սխալներուն մասին, պատմական, ազգագրական, եւ այլն տեսակէտերէն, նկատի առնելով հոս ներկայացուած թեզը եւ հայերու կողմէ մէկ կամ երկու ուրիշ յուշագիրերու մէջ [պարզուածը], որոնք պէտք է [մեր թղթածրարին] կցուին: Երբ մենք այս ըրած ենք՝ մենք կրնանք մեր միտքը աւելի եզրափակող կերպով ճշդել հարցին քաղաքական, ռազմագիտական, եւ այլն տեսակէտերէն»¹⁸:

Հոս պէտք է յստակացնել թէ Փոցտամի մէջ հայկական եւ վրացական պահանջներուն ներկայացումը չէր հրապարակուած այդ օրերուն: Հայեր անտեղեակ էին թէ Վրաստանի անունով ալ հող կը պահանջուի Թուրքիայէն: Հակառակ որ Փորէյն Օֆիսը տեղեակ էր Փոցտամի խօսակցութիւններէն, ու հոն Վրաստանի անունով ալ եղած պահանջէն, նկատի առած Խորհրդային Միութեան մամուլի եւ ձայնասփռութիւնը քարոզչութիւնը եւ հայկական սփռութիւնը մէկը միւսը յաջորդող յուշագիրերը, իր ուսումնասիրական ըստանդարտներէն պահանջեց թրքական հողամասերու հայկական պահանջին մասին խորհրդապահական տեղեկագիր մը: Ե Հոկտեմբեր 1945ին այդ տպագիր 5 էջնոց տեղեկագիրը տրուեցաւ բրիտանական դահլիճի անդամներուն եւ Ճորճ Չ. Թագաւորին¹⁹: Այդ տեղեկագրին թարգմանութիւնը լրիւ տուած ենք մեր Հայկական Հարցի Մասին գրքին մէջ, ուր գրուած է շուրջ 11 տպագիր էջեր²⁰:

Լոնտոնի Արտաքին գործոց նախարարներու խորհրդաժողովին, ըստ Ամերիկայի յայտնի սիւնակագիր Քոնսթանթին Պրաունի, որ իր տեղեկութիւնները քաղած էր Ուաշինկթոնի արտաքին նախարարութեան շրջանակներէն, Խորհրդային Միութեան արտաքին գործոց նախարար Մոլոթով արծարծած է նեղուցներու եւ Կարս-Արտահանի հարցը անտեղիտայիութեամբ²¹:

Խորհրդային Միութիւնը իր քարոզչական արշաւը կը շարունակէր: 21 Նոյեմբերին Խորհրդային Միութիւնը յայտարարեց թէ ծրագրած է դէպի Խորհրդային Հայաստան ներգաղթ կազմակերպել: Ապա 27 Նոյեմբերին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Զ., հայերէն լեզուով գրուած յուշագիրով դիմեց Խորհրդային Միութեան վարչապետ Ստալինին, ԱՄՆի նախագահ Թրումընին եւ Մեծն Բրիտանիոյ վարչապետ Էթլինին, որոնց արտաքին գործոց նախարարները Մոսկուայի մէջ խորհրդաժողով ունէին, պահանջելով Թուրքիոյ կողմէ զրաւեալ հայկական հողամասերու վերադարձը Խորհրդային Հայաստանին²²: Ամենայն Հայոց Կաթողիկոսին ըրած պահանջը աւելի էր Կարս-Արտահանի պահանջէն, ձեւով մը ան կը պահանջէր Սեւրի դաշնագիրով երաշխաւորուած հայկական հողերը:

Յանկարծ, Թիֆլիսի Քոմունիսթի թերթին մէջ վրացի ակադեմականներ՝ Փրոֆ. Ճանաչիա եւ Փրոֆ. Պերժենեշւիլի Մոսկուայի քաջալերանքով, 14 Դեկտեմբեր 1945ին «Մեր օրինաւոր պահանջները Թուրքիոյ դէմ» խորագրեալ գրութեամբ Արտահանի, Արդուինի եւ այլ Սեւ ծովեան շրջաններու Խորհրդային Վրաստանի կցման պահանջը ներկայացուցին, պատմական եւ այլ գետիններու հիմամբ: Երկու ակադեմիկոսները կը ջանային պատմական, ազգագրական եւ այլ հիմունքներու վրայ արդարացնել Արտահանի, Արդուինի, եւ Սեւ ծովեան՝ Օլթիի, Թորթումի, Իսքիլի, Բաբերդի, Կիւմիշխանէի, Արեւելեան Լազիստանի, Տրապիզոնի եւ Կիրեսոնի շրջաններու վրացական ըլլալը հիմնաւորել: Յօդուածագիրները կը նշէին թէ այդ շրջանին եւ Լազիստանի մէջ կը բնակէին ազգագրականօրէն վրացիներ, որոնք կը տարբերէին միայն դաւանանքով, քանի իսլամ էին²³:

Մոսկուայի մէջ, արտաքին գործոց նախարարներու խորհրդաժողովին բացման օրը՝ 20 Դեկտեմբեր 1945ին, Փրատա, Իզվեսթիա եւ Քրասնայա Չվեդտա պետական հակակշռի ենթակայ թերթերը, թարգմանաբար արտատպած էին վրացի ակադեմիկոսներուն յօդուածը²⁴:

Թէեւ բրիտանական Ֆորէյն Օֆիսին մէջ վրացական պահանջները «ծայրայեղ կերպով անիմաստ» կը գտնէին, նոյնիսկ հեգնելով թէ «արդեօ՞ք Վրաստանը կը նպատակադրէ Հայաստանի դէմ պատերազմի մտնելու, ըստ երեւոյթին երկուքին կողմէ վէճի առարկայ հողամասերու [հարցին] վրայ»²⁵, այսուհանդերձ 22 Դեկտեմբեր 1945ին Ֆորէյն Օֆիսի ուսումնասիրական բաժանմունքը այս անգամ «Թրքական հողերու վրացական պահանջը» խորագրով նոր, խորհրդապահական 2 տպագիր էջնոց տեղեկագիր մը կը պատրաստէր, խորհրդաժողովի բացումէն միայն երկու օրեր ետք²⁶:

Ֆորէյն Օֆիսը իր պատրաստած խորհրդապահական տեղեկագիրը Մոսկուայի խորհրդաժողովի բրիտանական պատուիրակութեան կը զրկէր նամակով մը, որուն մէջ կ'ըսէր թէ պահանջուած շրջանը վրացիներէ կամ հայերէ բնակուած չէր, թէեւ հայերը «թերեւս աւելի լաւ պահանջ ունին խնդրոյ առարկայ շրջանին, քանի որ նման անձերը թուրքերուն կողմէ ջարդուած էին անցեալ դարուն վերջաւորութեան եւ ներկայ [դարուն] սկիզբին»: Ֆորէյն Օֆիսը կ'եզրակացնէր թէ վրացական պահանջը առաջ քշուած է խորհրդային սկզբնական պահանջը աւելի չափաւոր ցոյց տալու եւ վախցնելու թուրքերը որ տեղի տային աւելի փոքր պահանջքին²⁷:

Մոսկուայի բրիտանական դեսպանատունէն Լոնտոն Ֆորէյն Օֆիսին զրկուած յուճ գաղտնի տեղեկագիր մը, կը յստակացնէր թէ Մոսկուա չէր փոխարիներ հայկական պահանջները վրացականով, այլ երկուքն ալ կը հետապնդէր, առաջնահերթութիւնը, սակայն, տալով նեղուցներու հարցին: Տեղեկագիրը կ'անդրադառնար բրիտանական դեսպանին Ստալինի հետ ունեցած տեսակցութեան, ուր ան այս վերջին հարցը նախ նշելէ ետք, անդրադարձած էր «Թուրքիոյ մէջ վրացիներէ եւ հայերէ բնակուած նահանգներու» հարցին²⁸: Այդ պետական քաղաքականութեան ծիրէն ներս կ'իյնար նաեւ Հայաստանի Կոմկուսի Առաջին Բարտուղար Գրիգոր Յարութիւնեանի ճառը, ուր ան կը պահանջէր «Թուր-

քիայի կողմից հայկական հողերի վերադարձը նրանց իսկական տիրոջ՝ Մ(ովե-տական) Հայաստանի»²⁰։ Ասոր համար այլ Մոսկուայի Փրատաան իր 6 Փետրուար 1946ի թիւին մէջ լայն տեղ կու տար ճառին, որ Մոսկուայի օտար դիւանագիտա-կան շրջանակներուն, որոնց շարքին՝ Մեծն Բրիտանիոյ դեսպանատան, ուշադ-րութեան կ'արժանանար։

Խորհրդային Միութիւն հողային պահանջներու իր քարոզչական արշաւը կը շարունակէր։ Փրատաա եւ Իզվեսթիա իրենց 22 Փետրուար 1946ի թիւերով կը յայտարարէին Ակադեմական Ճիւղերի մասին տուած հրապարակային դասա-խօսութեան «Հայաստան եւ Թուրքիա» նիւթին շուրջ²¹։ Իսկ Փրատաա իր 25 Փետրուար 1946ի թիւին մէջ կը հրատարակէր Վրաստանի Կոմկուսի Առաջին Բարտուղար Բ. Շարփիանիի յօդուածը, ուր կրկնուած էր Վրաստանի հողային պահանջը։ Մոսկուայի բրիտանական դեսպանատունը, ի տես Հայաստանի եւ Վրաստանի Կոմկուսի առաջին քարտուղարներուն հրապարակային դիրքորո-շումներուն տրուած կարեւորութեան, Խորհրդային Միութեան կեդրոնական մամուլի օրկաններուն կողմէ, 25 Փետրուարին իսկ Լոնտոնի կը տեղեկացնէր թէ Մոսկուա «նոյնաստիճանի կուսակցական թիկունք կու տայ վրացական, ինչպէս նաեւ հայկական պահանջներուն։ Ոչ մէկ մեկնարանութիւն կայ որ երկուքն այլ Արտահանը կը պահանջեն։ Վրացական քարտուղարը իր հայկական պաշտօնակիցին հակառակ ուղղակիօրէն Թուրքիան չի մեղադրեր վրացական հողերը առնելու մէջ»²²։

Այս շրջանին Խորհրդային Միութեան եւ Արեւմտեան դաշնակիցներու փոխարարներութիւններն այն չէին ինչ որ էին պատերազմի աւարտի շրջանին եւ անկէ անմիջապէս ետք, զէթ մինչեւ Ճափոնի անձնատուութիւնը։ Սառ-նացում մը կար։ Չորրջի 1946ի Մարտին Ֆուլթընի իր հռչակաւոր ճառով Խոր-հրդային Միութիւնը «երկաթեայ վարագոյր»ով պարուրուած նկատած էր։ Յուրտ պատերազմը սկսած էր։

Այս միջնորդութիւն մէջ էր որ 26 Յունուար 1946ին, Անքարայի մօտ բրիտա-նական դեսպանատան մամուլ կցորդ Ալլէն Ֆորէյն Օֆիսի ուսումնասիրական բաժանմունքի 5 Հոկտեմբեր 1945ի «Թրքական հողամասերու հայկական պա-հանջը» խորագրով ընդհանրապէս հաւասարակշռեալ տեղեկագրին, ինչպէս նաեւ նոյն բաժանմունքի 22 Դեկտեմբեր 1945 թուակիր «Թրքական հողերու վրացական պահանջը» խորագրեալ տեղեկագրին իրագեկ ըլլալէ ետք, Թրքական շրջանակներէ քաղելով հակահայ եւ փրօ-թուրք տրամադրութիւններով լեցուն տեսակէտեր դրկեց Ֆորէյն Օֆիսին, դրժել ջանալով հոն առաջադրուած միտ-քեր, քանի Ֆորէյն Օֆիսի ուսումնասիրական բաժանմունքը նոր տեղեկագիր մը կը պատրաստէր հայկական եւ վրացական պահանջներուն մասին։ Մեծն Բրիտանիոյ Ֆորէյն Օֆիսը տակաւին կը մտածէր թէ այս հարցը կրնայ արտա-քին գործոց նախարարներու խորհրդաժողովի մը կամ ՄԱԿին ներկայացուիլ, քանի 20 Դեկտեմբեր 1945ին Ստալին բրիտանական դեսպանին չեշտած էր թէ հարցը պէտք է Թուրքիոյ կամ դաշնակիցներուն հետ բանակցութիւններով լուծուի։ Ուստի Ֆորէյն Օֆիսի ուսումնասիրական բաժանմունքը, 4 Ապրիլ 1946ին, նոր խորհրդապահական տեղեկագիր մը կը պատրաստէր «Հայկական

եւ վրացական պահանջներ թրքական հողամասի» խորագրով: Այս 8 տպագիր էջնոց տեղեկագիրը, միացումն էր 5 Հոկտեմբեր եւ 22 Դեկտեմբեր 1945ի նախորդ անջատ տեղեկագիրներուն: Ահա այս տեղեկագիրն է որ առաջին անգամ թարգմանարար լրիւ կու տանք այս ակնարկէն ետք³²:

Նկատելով որ մեր Հայկական Հարցի Մասին գրքին մէջ, մանրամասնօրէն անդրադարձած ենք այս տեղեկագրին նախորդներէն ունեցած տարբերութեան, հոս կը գործանանք քանի մը նշումներով միայն:

Առաջին՝ այս նոր տեղեկագրին մէջ պատմական մասերը վերատեսութեան ենթարկուած ու ընդլայնուած էին:

Երկրորդ՝ նոր տեղեկագիրը Ալէնի նշած կարգ մը տեսակէտերը ընդգրկած էր:

Երրորդ՝ բաւական լայն անդրադարձում կար Մոսկուայի 16 Մարտ 1921ի թուրք-առու եւ Կարսի 13 Հոկտեմբեր 1921ի թուրք-սովետ դաշնագիրներուն:

Չորրորդ՝ տեղեկագիրը, նշելով հանդերձ թէ թուրքիա Կարսի բարձրաւանդակը անհրաժեշտ կը նկատէր, ուստական յառաջախաղացք մը դէպի Միջերկրական ծով եւ Պարսից ծով կասեցնելու համար, Կարս-Արտահանի կորուստը թրքական տնտեսութեան տեսակէտէն տակաւին կենսական չէր գտներ:

Հինգերորդ՝ որպէս նորութիւն կը ներկայանար տեղեկագրի 48րդ պարբերութիւնը, որ աւերչուած էր Մեծ Եղեռնին:

Վեցերորդ՝ նշելով հանդերձ որ Վրաստանի պահանջած հողամասերը կը պարփակէին Խորհրդային Հայաստանի պահանջած հողամասին գրեթէ կէսը, բրիտանական տեղեկագիրը հայկական պահանջը աւելի յուրջ կը գտնէր քան վրացականը:

Յարդ վաւերաթուղթերէ չեն պարզուած թէ Խորհրդային Հայաստանի եւ Խորհրդային Վրաստանի հողային պահանջները քննարկուած են, թէ՞ ոչ՝ արտաքին գործոց նախարարներու խորհրդաժողովներուն՝ այս վերի տեղեկագիրէն ետք: Յստակ է, սակայն, թէ թրումէնեան վարդապետութեան 1947 Մարտին ճշդած քաղաքականութեամբ երաշխաւորուեցաւ թուրքիոյ հողային ամբողջականութիւնը եւ այս հարցը ցուրտ պատերազմին զոհ գնաց:

Այսուհանդերձ Կարս եւ Արտահանի հարցը անգամ մը եւս անուղղակիօրէն արծարծուեցաւ ՄԱԿի մէջ, Լէյք Սեքսէսի ՄԱԿի քաղաքական խորհուրդի Ա. Յանձնախումբի 25րդ նիստին, 24 Հոկտեմբեր 1947ին: Երբ թրքական պատուիրակը յայտնեց թէ խորհրդային հակա-թուրք քարոզչութեան մէջ տեղ ունի թուրքիայէն հողերու անջատումը եւ յիշեց վրացի երկու ակադեմականներու նամակը, յուր անցնելով հայկական պահանջներու վրայէն, Խորհրդային Միութեան պատուիրակը՝ Վիշինսքի, անդրադառնալով վրացի ակադեմականներու գրութեան, նշեց թէ անոնց «հիմնաւորումները անվիճելի են», աւելցնելով թէ «թերեւս լաւ պիտի ըլլար սկսիլ վիճարանութիւնները անկասկածելիօրէն վրացական այս շրջանները Խ[որհրդային] Վրաստանին վերադարձնելու մասին»³³:

Հայկական ներգաղթի գրեթէ աւարտին, Խորհրդային Միութեան պատուիրակին խօսքերը, որոնք Մոսկուայի Իգլիսիթիաի եւ Փրաւտաի 28 Հոկտեմբեր 1947ի թիւերուն մէջ ալ հրատարակուեցան, սփիւռքահայ շրջանակները նեղա-

ցուց: Արդէն իսկ 1946 թուին Թուրքիոյ տուած իր երկու յուշագիրերուն մէջ, 7 Օգոստոսին եւ 24 Սեպտեմբերին Խորհրդային Միութիւնը կը պահանջէր ժիւան 1938ի Մոնթրէօի նեղուցներու վերաբերեալ համաժողովի որոշումներու վերանայումը: Ի վերջոյ Ստալինի մահէն քանի մը ամիս ետք, 30 Մայիս 1953ին, ի մեծ յուսախարութիւն հայոց, Խորհրդային Միութեան արտաքին գործոց նախարար Մոլոթով յայտնեց թէ Հայաստանի եւ Վրաստանի կառավարութիւնները, յանուն բարի դրացիական յարաբերութիւններու պահպանման եւ անվտանգութեան ամրապնդման, հնարաւոր համարած էին հրաժարիլ Թուրքիայէն ունեցած իրենց հողային պահանջներէն, իսկ Խորհրդային Միութիւն ալ կը փութէր իր նախկին զիրքը նեղուցներու նկատմամբ, եւ հուսկ Խորհրդային Միութիւնն ալ ոչ մէկ հողային պահանջ ունէր Թուրքիայէն³⁴:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Harcave, Sidney, *Russia, A History*, Third Edition, Chicago, 1956, էջ 635:
2. F.O. 371/30127:
3. Ա.Յ. Յարութիւնեան, «Հայ ժողովրդի աւանդը յաղթանակի կոփման գործում», *Քանրեր Հայաստանի Արխիւների*, Երեւան, թիւ 1 (41), 1975, էջ 15:
4. *Փրաւտա* օրաթերթ, Մոսկուա, Մարտ 27, 1947:
5. Charles Warren Hostler, *Turkism and the Soviets*, London, 1997, էջ 176:
6. *Թեհրան, Եալթա, Պոդգորաս*, փաստաթղթերի ժողովածու, Հայաստան Հրատարակչութիւն, Երեւան, 1970, էջ 137:
7. Ռոնըլտ Արեկըր Սիւնի, «Վերադարձ դէպի Արարատ. Հայաստան՝ պաղ պատերազմի Տարիներուն», *Ազդակ* օրաթերթ, Պէյրութ, 68րդ տարի, 11 Մայիս 1993, թիւ 51(18461): *Keesing's Contemporary Archives* (1946-1948), էջ 7737a:
8. Սիւնի, նոյն տեղը:
9. Նոյն տեղը:
10. *Keesing's* էջ 7737a, *op. cit.*
11. Altan Deliorman, *Turklere karsi Ermeni komitecileri*, Istanbul, 1973, էջ 307: Foreign Relations of the U.S., *Conference of Berlin (Potsdam)*, 1945, vol. I, էջ 1025 եւ 1032:
12. «Հայկական Գատը եւ Խորհրդային Միութիւնը», *Արարատ* օրաթերթ, Պէյրութ, 26 Յունուար 1981: Օրաթերթին տուածը կը վերցնի Անտրէյ Կրոմիդոյի խմբագրութեամբ եւ ռուսերէնով լոյս տեսած հատորէ մը՝ *Խորհրդային Միութիւնը Միջազգային կոնֆիրանսներում Հայրենական Մեծ պայտերազմի ժամանակաշրջանում 1941-1945 թ.*, հատոր Զ., Մոսկուա, 1980, էջ 37-41: Մէջբերեցիմք արեւելահայերէնը արեւմտահայերէնի վերածելէ ետք:
13. *Նոյն*, էջ 144-145:
14. *Նոյն* եւ Harry S. Truman, *Memoires: Year of Decision*, Signet paperback, New York, 1965, էջ 413:
15. F.O. 371/48795:
16. *Նոյն* եւ *Արեւելք Տարեգիրք*, Հալէպ, 1948, էջ 77:
17. F.O. 371/48795:
18. Նոյն տեղը:
19. Նոյն տեղը:

20. Չառեն Սարգիսյան, *Հայկական Հարցի Մասին*, Պէյրուք, 1978, էջ 44–55: Մոյն վաներաթուղթի մեր օգտագործումն քսան տարի ետք անգլերեն բնագիրը անյաջող վերարտադրումով լոյս տեսած է (Anita L.P. Burdett, (ed.), *Armenia, Political and Ethnic Boundaries*, 1878-1948, U.K., 1998, էջ 1001–1005 եւ քարտեղ էջ 1006–1007):
21. *Չարթոնք* օրաթերթ, Պէյրուք, 5 Գեկտեմբեր 1967, էջ 3:
22. *Էջմիածին*, Էջմիածին, Բ. Տարի, Նոյեմբեր–Գեկտեմբեր 1945, էջ 8–10:
23. *Keesing's*, էջ 7737 a. եւ F.O. 371/48795:
24. Միւնի, 12 Մայիս 1993, քիւ 52 (18462):
25. F.O. 371/48795:
26. Նոյն տեղը:
27. Նոյն տեղը:
28. F.O. 371/48775:
29. F.O. 371/59246:
30. Նոյն տեղը:
31. Նոյն տեղը:
32. F.O. 371/59247: Մեր *Հայկական Հարցի Մասին* գիրքին մէջ մասնակիօրէն անդրադարձած եւ քանի մը մէջբերումներ կատարած ենք 4 Ապրիլ 1946ի «Հայկական եւ Վրացական պահանջներ թրքական հողամասի» խորագրով տեղեկագրէն: Կրկնենք. քէ 1998ին Մեծն Բրիտանիոյ մէջ լոյս տեսած արխիւային վաներաթուղթերու հաւաքածոյի մը մէջ *Armenian and Georgian claims to Turkish territory* վաներաթուղթը, որուն հայերէն թարգմանութիւնն է որ առաջին անգամ կու տանք. իր բնագրին լուսապատճիմումովը, տրուած է (տես՝ Anita L.P. Burdett, ed., *Armenia, Political and Ethnic Boundaries*, 1878-1948, U.K., 1998, էջ 1023–1030). ինչպէս նաեւ Ալլէնի տեղեկագրինը (էջ 1016–1020):
33. Գարրիէլ Լազեան, *Հայաստան եւ Հայ Գաղղ Հայ եւ Ռու Յարաբերութիւններու Լոյսին Տակ*, Գահիրէ, 1957, էջ 365–366:
34. *Սովետական Հայաստան* օրաթերթ, Երեւան, 19 Յուլիս 1953: Մասնակիօրէն տրուած է նաեւ *Keesing's Contemporary Archives* (1953), էջ 13101c:

ՎԱԵՐԱԹՈՒՂԹԸ¹ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՎՐԱՑԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ ԹՐՔԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ

(Այս բուդըը կը միացնէ նախորդ երկու՝ 5 Հոկտեմբեր եւ 22 Դեկտեմբեր 1945ի բուդթերը, յաջորդաբար հայկական եւ վրացական պահանջներու մասին: Մասնաւորաբար պատմական պարբերութիւնները վերանայուած եւ ընդլայնուած են):

1. Այն պահանջը թէ նախապէս հայերով բնակուած թրքական հողամասը պէտք է կցուի Խորհրդային Հայաստանին, չի թուիր թէ արժարժուած է նախքան 1945ի սկզբնաւորութիւնը: Մինչեւ այն ատեն բոլոր ցուցմունքները այն էին թէ Հայկական Հանրապետութեան բնակիչները գոհ էին իրենց վիճակէն եւ թէ ԽՍՀՄի կառավարութիւնը գոհ էր Հայկական Հանրապետութեան քաղաքական եւ տնտեսական զարգացումէն: Թէ թրքական հողամասի պահանջը առաջին պարագային ինքնաբոյս կերպով արժարժուած է հայերուն կողմէ կամ խորհրդային դրդումով թերեւս այնքան ալ յատկանշական չէ: Բիշ կասկած կրնայ ըլլալ թէ Ռումանիոյ, Սուրիոյ եւ մասնաւորաբար Միացեալ Նահանգներու հայերը, որոնք 1945ի ամառը Փոցտամի խորհրդածողովի ժամանակին եւ յետոյ առաջ քշեցին այդ, ըրին խորհրդային վաւերացումով: Պահանջը հիմնուած էր հետեւեալ պատճառաբանութեամբ.

ա) թէ այդ հնարաւորութիւն պիտի ընծայէր արտասահմանի հայերուն (որոնք մէկէն մէկուկէս միլիոն կը կարծուին) մայր հայրենիք վերադառնալու:

բ) թէ այդ արդարութեան գործ մը պիտի ըլլար ժողովուրդի մը համար որ ծանրօրէն տուժած էր անցեալին:

գ) («Նիւ Եորք Թայմզ»ի մէկ նամակագրին կողմէ², միայն) թէ Կարսի ամրոցը Խորհրդային Միութեան ռազմագիտականօրէն կենսական էր:

2. 14 Դեկտեմբեր 1945ին, Թիֆլիսի (այժմ կոչուած է Թալիսիս) տեղական թերթը տպած էր նամակ մը երկու վրացի հետազօտողներու կողմէ «մեր օրինական պահանջները Թուրքիոյ դէմ» խորագրեալ: Այս յօդուածը ռուսական մամուլէն վերարտադրուած էր: Պահանջուած վայրերն էին Արտահան, Արդուին, Օլթի, Թորթուն, Իսպիր, Պայպուրթ, Կիւմիշհանէ, Արեւելեան Լազիստան, Տրապիզոն եւ Կիրասոն – այսինքն, ծովեզերեայ 100 մղոն խորունկութեամբ երիզ մը որ կը տարածուէր մօտ 200 մղոն դէպի արեւմտեան կողմ ռուսօթորթ սահմանէն (տես քարտէսը) եւ կը պարունակէր Հայաստանի կողմէ պահանջուած հողամասին գրեթէ կէսը: Այս պահանջը հիմնուած էր պատմութեան ընդհանուր գետիներու վրայ եւ առջեւ քշուած էր ռուսական մամուլին եւ

հեռագրական գործակալության կողմէ հակառակ հայկական պահանջին հետ իր չհամակերպելուն:

Պատմություն

3. Հայ ժողովուրդի օրրանը չի բաղկանար փոքրիկ Հայկական Հանրապետությանը միայն, բայց կը տարածուի Թուրքիայէն շատ ներս: Ան կը պարփակէ Արարատի բարձրագուտը, Մուրատ Սուի (Եփրատի ճիւղաւորում մը) վերին հովիտը, Վանայ լիճին հովիտը, եւ արեւելեան ծայրամասը՝ Արեւելեան Անատոլիոյ բարձրաւանդակին: Ք.ա. վերջին դարու առաջին կէսին, երբ ատենի մը համար Հայաստան իրեն կցեց Անտիոքը, իր պատմութեան մէջ բարձր կէտ մըն էր³: Ան առաջին պետութիւնն էր որ քրիստոնէութիւնը ընդունած էր իբրեւ պետական կրօն, կանխելով հռոմէական կայսրութիւնը ատելի քան կէս դարով: Այն իրողութիւնը որ հայերը քրիստոնէաներ էին ոչ-քրիստոնէայ դրացիներու մէջ, կը բացատրէ իրենց յաջորդական պատմութեան մէկ մասը: Հակառակ Պարսկաստանի, Հռոմի եւ Բիզանդիոնի յաջորդական գերակշռութեան, Հայաստան իր անջատ գոյութիւնը պահեց, եւ ժամանակաւորապէս Արար խալիֆայութեան ենթարկուելէ ետք, մեծ քարգաւաճումի հասաւ Ք.է. Թ. դարուն, երբ կային հայկական իշխանապետութիւններ որոնց մայրաքաղաքներն էին Անի (այսօր անբնակ վայր մը թրքական հողամասէն հազիւ ներս), Կարս եւ Վան: Բայց այս քաղաք-պետութիւնները ատելի կարեւոր չէին քան դրացի իսլամական էմիրութիւնները Ախլաթի, Մարտինի, Տիարպէթիի եւ այլ վայրերու: Անի, որ միշտ նկատուած է որպէս կեդրոնը հայկական մշակոյթին, հայ իշխաններու կողմէ իշխուեցաւ միայն հարիւր տարի եւ յաջորդաբար ենթարկուեցաւ արաբական, վրացական, քրտական, բիզանդական եւ թրքական իշխողներու:

4. Բիզանդական եւ սելճուք թուրքերու ճնշումին տակ հայեր դէպի Արեւմտեան կողմ շարժեցան 1080 [թուի] շուրջ եւ Կիլիկիոյ մէջ սկսան «Փոքր Հայաստանի» անկախ թագաւորութիւնը, որ իր մայրաքաղաք Միս (Քոզան)ով տեւեց մինչեւ 1375:

5. Վրացիները ազգ մը եղած են 2000 տարիէ ի վեր: Իրենց օրրանը կը թուի ըլլալ այսօրուան Թալիլիսի շրջանը եւ իրենց առաջին մայրաքաղաքը՝ այդ դրացնութեան մէջ, Մցխէթի մէջ: Հին ժամանակներուն մակեդոնացիներ եւ հռոմէացիներ ներխուժած են հոն: Քրիստոնէութիւնը որդեգրեցին երրորդ դարուն, եւ որպէս քրիստոնէայ ժողովուրդ, անոնք եւս պարսիկներու, արաբներու եւ սելճուք թուրքերու յաջորդական ներխուժումներուն ենթարկուեցան: Կովկասի բնակչութեան շուրջ երեք-հինգերորդը իսլամ է միջնադարէն ի վեր: Իսլամական գերդաստան մը Թալիլիսիի մէջ իշխեց չորս դարերու ընթացքին, մինչեւ 1122, եւ վրացական միջնադարեան մշակոյթը զօրաւորապէս ազդուեցաւ սելճուքներէն: Վրացական պատմութեան մեծագոյն շրջանը, ԺԲ. դարուն վերջին, կը համապատասխանէ երրորդ իսլամականութեան որ անուղղակիօրէն տկարացուց իսլամ թրքական էմիրութիւնները Ազրայէճանի եւ վերին Եփրատի մէջ: Այդ ժամանակներուն Թամարա թագուհիին [իշխանութեան] ներքեւ, վրացիները իրենց իշխանութիւնը կարճ ատեն մը տարածեցին մինչեւ Կարս, նոյնիսկ Վանայ լիճին եզրին՝ Ախլաթ: Բայց երբեք չհասան այնքան արեւմուտք

որքան էրգրում, Պայայուրք կամ Տրապզոն (Տրապիզոն):

6. Թուրքերը կը թուի թէ միակն են որ կը հաւատան թէ քրքական բնակավայրեր կային Աորոսի հովիտին եւ Արտահանի շրջանին մէջ Ք.ա. քանի մը դարեր առաջ: Անկասկած կային կեդրոնական Ասիայէն թափառաշրջիկներ նուազագոյնը Ք.ա. է. դարէն եւ անկէ ետք. բայց կը թուի թէ փաստ չկայ որ այս շրջանի նախա-սելճուքեան յարձակողներ թուրքեր ըլլային: Ք.ա. Գ. եւ Ժ. դարերուն միջեւ Վրաստան, Հայաստանի նման, կրկնակիօրէն ներխուժեցաւ քրքական ցեղախումբերու կողմէ, ինչպէս աւարներու, հոներու եւ խազարներու, բայց Կովկասի հիւսիսէն այս յարձակումները հարաւի կողմը չձգեցին մնայուն բնակավայրեր: Բոլոր շրջանը Անկիզիսանի եւ Թիմուրլենկի հորդաններու կողմէ ներխուժուեցաւ, բայց հայերուն նման, վրացի ժողովուրդը վերապրեցաւ:

7. Վճռական դէպքը Արեւելեան Անատոլիոյ գրաւումին՝ քրքական ցեղէ ժողովուրդի մը կողմէ սելճուք թուրքերու յարթանակն էր քիւզանդացիներու վրայ Մալազկիքի (Մելաշկերտ)⁵ 1071ին: Առկէ ետք հինգհարիւր տարի, մոնկոլ միջնաբարոյ մը, սելճուքեան պետութիւնները բարգաւաճեցան. ԺԵ. եւ ԺԶ. դարերուն, զօրաւոր թիւրքմէն գերդաստաններ գոյութիւն ունէին Հասան Քալէի (վերջերս Փասինլէր կոչուած) եւ Ախլաթի մէջ:

8. 1534ին Օսմանեան թուրքերը գրաւեցին այն հողամասը որ կը պահանջուի Հայաստանի եւ Վրաստանի համար, թէ եւ չեն պնդեր թէ Կարսի եւ Արդուի մի շրջանները վերջնականապէս կցած են մինչեւ 1580: Պահանջուած ամբողջ շրջանը քրքական մնացած է մինչեւ օրս բացի՝ (ա) Կարս, Արտահան եւ Արդուին Ռուսիոյ զիջեցան 1878ին եւ թուրքերը վերստին առին 1918ին ցարականութեան անկումէն ետք, (բ) Պաթումը եւս Ռուսիոյ փոխանցեցին 1878ին եւ վերստին առնուեցաւ Թուրքիոյ կողմէ 1918ին եւ անգամ մը եւս Ռուսիոյ փոխանցեցին 1921ին:


9. ԺԷ. դարուն Վրաստան Ռուսիոյ սկսաւ օգնութեան կոչ ուղղել Պարսկաստանի մնայուն սպառնալիքին դէմ: 1801ին, բռնաբարելով գոյութիւն ունեցող համաձայնութիւնները, Ռուսիա կլլեց գրեթէ ամբողջ Վրաստանը: Վրացական խորհրդային հանրապետութիւն մը հիմնուեցաւ 1921ին: Իրենց [պատմութեան] ելեւէջներուն մէջ վրացիներու վերապրումը իբրեւ ազգային իրականութիւն մը մեծապէս պէտք է օգտուած ըլլայ կաթողիկոսի ներքեւ ազգային եկեղեցիի մը գոյութեամբ: Իր յաջորդը այսօր ճանչցուած է խորհրդային իշխանութիւններէն եւ վրացական եկեղեցին հաղորդակցութեան մէջ է ռուսական օրթոտոքս եկեղեցիին հետ:

10. Հայերու վերջին շրջանի պատմութիւնը, աւելի նուազ պարզ է: Թուրքիոյ մէջի հայերը Օսմանեան կայսրութեան ամենէն հաւատարիմ ենթակայ ցեղերուն մէջն էին մինչեւ որ [Բարձրագոյն] Դուռը ծախողեցաւ բարեկարգութիւններ մտցնելու, եւ այս ԺԹ. դարու վերջերուն իրենց մէջ արքնցուց դժգոհութեան ոգի մը, ինչ որ դժբախտաբար միայն աւելցաւ Մեծն Բրիտանիոյ եւ Ռուսիոյ կողմէ փոխմիփոխ ցոյց տրուած պարբերական հետաքրքրութեամբ:

[Հ.Յ.] Դաշնակցութիւնը եւ այլ հայկական յեղափոխական կազմակերպութիւններ մէջտեղ եկան եւ գործադրեցին բռնութիւն: Այդ ժամանակէն անդին

ARMENIAN & GEORGIAN CLAIMS TO TURKISH TERRITORY & "THE KURDS OF TURKEY"

Map prepared by Research Dept. F.O. May 1946



RESEARCH DEPT. F.O. May 1946

Russo-Turkish Frontier 1878-1918

International frontiers
Soviet-Turkish Frontier 1921-1945

Railways

1:500,000

քուրքերը հայկական շարժումներու բոլոր երևոյթները ճգնեցին ջարդերով (օրինակ 1896ին եւ 1909ին) եւ այլ անգութ միջոցներով մինչեւ 1915 եւ 1916՝ երբ հայկական համակրանքը յառաջացող ցարական բանակին հետ էր՝ անոնք կազմակերպեցին ջարդեր եւ տեղահանութիւններ, այնքան մեծ չափանիշի վրայ, որ գործնականօրէն Անատոլիան մաքրեցին հայերէ:

11. 1917ին ցարական ուժերու քայքայումով Թուրքիան վերատիրացաւ Կարսի, Արտահանի եւ Պաքունի եւ այս զինուորական կատարումած իրողութիւնը հաստատուեցաւ Պրես Լիթովսքի դաշնագրով, 3 Մարտ 1918ին: Այս դաշնագիրը կը տրամադրէր թէ տեղացի բնակիչները պէտք է ճանչնային իրենց «սահմանադրական եւ միջազգային» գործերը առանց Ռուսիոյ կողմէ միջամտութեան բայց խորհրդակցաբար իրենց դրացիներուն, յատկապէս Թուրքիոյ: Այս յօդուածը Թուրքիան գործնականին մէջ թարգմանեց հանրաքուէ մը կազմակերպելով: Ըստ թրքական յայտարարութիւններու՝ արդիւնքը ճնշիչ մեծամասնութեամբ [հողամասին] Թուրքիոյ մէջ պարփակուիլն էր: Ըստ խորհրդային թեզերուն –ինչ որ թերեւս անհասանկան չէ– [արդիւնքը] ջնջուած էր թրքական զօրքերու ներկայութեամբ, որոնք մաքրագործած էին հայկական մեծամասնութիւնը: Որեւէ պարագայի, խորհրդային գողները սխալ են յայտարարելով թէ թրքական զօրքերու ներկայութիւնը դաշնագրին բռնարարումն է: 8 Յունիս 1918ին, Թուրքիա ճանչցաւ նորակազմ վրացական եւ հայկական հանրապետութիւնները իրենց մայրաքաղաքներով, յաջորդաբար՝ Թիֆլիս եւ Երեւան: Բայց եւ այնպէս հայերը ստիպուած էին իրենց երկրին գրաւումը արտօնելու, թէւ գերմանացիները [Թուրքիան] Վրաստանէն դուրս պահեցին:

12. Երբ Թուրքիան ինք ինկաւ 1918ի վերջերուն, դաշնակիցները զինք ստիպեցին ետ քաշուիլ մինչեւ 1914ի սահմանը: Հայկական Հանրապետութիւնը այն ատեն օգտուեցաւ Թուրքիոյ անկումէն, գրաւելով թրքական հողեր մինչեւ Էրզրումէն 100 մղոն անդին:

13. 1919ին, Թրքահայաստանի վրայ հոգատարութիւնը մերժուեցաւ Միացեալ Նահանգներու կողմէ, ինչպէս նաեւ նոյնիսկ Իտալիոյ առաջարկուեցաւ Անդրկովկասի (Վրաստան, Ազրայէյճան, Հայաստան) հոգատարութիւն: Յետագային այս երեք հանրապետութիւնները առաջարկեցին բրիտանական կայսրօրքի մը [ծախսերը] վճարել: Բայց դաշնակիցները շատ բաժնուած էին եւ պատերազմէն յոգնած՝ այսպիսի լուրջ յանձնառութիւն մը առնելու, ինչպէս՝ Հայաստանի եւ Վրաստանի թիկունք կանգնիլ ընդդէմ յաղափոխական Ռուսիոյ եւ վերածնող Թուրքիոյ:

14. Երեք ծրագիրներու մասին վիճուեցաւ ստեղծելու համար նոր Հայաստան մը, գոյութիւն ունեցող Երեւանի Հանրապետութեան վրայ հետեւեալ թրքական հողամասերը արեւցնելով.–

1) Մեծ հողամաս մը պարսկական սահմանէն եւ Սեւ ծովէն դէպի Միջերկրական ընդգրկելով (ա) Կիլիկիան, ուր հայերը բազմաթիւ էին (տես 39րդ պարբերութիւնը) եւ (բ) վեց նահանգները որոնք հայկական փոքրամասնութեան գլխաւոր նստակայքն էին, նախքան 1915 եւ 1916ի ջարդերն ու տեղահանութիւնները: Ասոնք էին Պիթիսի, Վանի, Տիարպեքիի, Մամուրէթ–էլ–Ազիզի (Հարփութ մայրաքաղաքով), Էրզրումի եւ Սվազի նահանգները: Ասոնք չորս

կամ հինգ անգամ անելի մեծ էին քան այս անունները այսօր կրող նահանգները, կամ

(2) վեց նահանգները առանց Կիլիկիոյ, կամ

(3) երգրումի ամբողջ վիլայեթը եւ Վանի, Պիթիսի եւ Տրապզոնի (Տրապզոն) վիլայեթներուն մեծ մասը:

1920ի Սեւրի դաշնագիրը, զոր դաշնակիցները ձախողեցան թուրքիոյ պարտադրելու, փորձեց իրագործել [վերեւ նշուած] 3[րդ կետը]՝ ամենէն համեստը վերոյիշեալ ծրագիրներուն: Սահմանները ճշդութեամբ նախագահ Ռիլսընի կողմէ (տես քարտէսը) եւ կ'ընդգրկէին անցք դէպի Սեւ ծովը Տրապզոնի մէջ: Բայց առաջարկը ինքնին նպաստեց որեւէ բանէ անելի թուրքերը ներշնչելու որ դիմադրեն, եւ եթէ անոնք յաջողեցան, այդ առաւելաբար արդիւնք էր բարոյական եւ նիւթական նեցուկին զոր ստացան պոլշեիկներէն: Լոզանի դաշնագիրը, որ թուրքերուն հետ կնքուեցաւ 1923ին, Հայաստանը չյիշատակեց:

15. Մինչեւ 1920, այն ատեն, թուրքիան վերակենդանացաւ: Թրքական ուժերը վերստին մտան Պաթում եւ պոլշեիկներուն արգելք չըլլալով, որոնք կը կեդրոնանային Հայաստանի հիւսիսային սահմանին վրայ թէւ անոնք իսկութեան մէջ չէին յարձակած, թուրքերը վերստին գրաւեցին Կարսը, Արտահանը եւ Արդուիւնը հայերէն: Ռուսերը եւ թուրքերը յետոյ ձեռնարկեցին սահմանը ճշդելու բանակցութեամբ:

16. Իւրաքանչիւր երկիր կասկածեցաւ, բայց պէտք ունեցաւ միսին: Պաշտպանութեան եւ յարձակումի համար պոլշեիկները պէտք ունեցան վստահ ըլլալ Անատոլիայէն, եւ ուրեմն առաջըր առնել որ քեմալականները Արեւմտեան պետութիւններուն հետ խաղաղութիւն չկնքէին: Քեմալականներուն կեանքի ճանապարհն էր Լեւինական (Ալեքսանդրապոլ) – Սարիղամիշ երկաթուղագիծը որ իրենց բերաւ զինուորական հայրաքայքումներ Ռուսիայէն: Ռուս եւ քրքական Մոսկուայի 16 Մարտ 1921ի դաշնագրի մուտքին մէջ, պայմանաւորուող կողմերը իրենք իրենց կը յայտարարեն «նկատի առնելով կայսերապաշտութեան դէմ հասարակաց պայքարը, նախատեսելով որ մէկու մը համար ծագած դժուարութիւնները միսին դիրքը պիտի դժուարացնեն...»՝ դժուար սակարկութիւն մըն էր որուն վրայ իւրաքանչիւր երկիր փաստօրէն կը յուսար բարելաւել յետագային եթէ բախտը իրեն նպաստաւորէր: Թրքական աղբիւրներու համաձայն անձամբ Ստալինի խնդրանքով թուրքիան Պաթումը թողլէց: Փոխարէնը ստացաւ անուտրական ազատ անցքի դիրութիւններ եւ խոստում մը որ լայն տեղական ինքնավարութիւն պիտի տրուէր, ինչ որ [թուրքիոյ] կարծիքով իսլամ աճարներուն առիթ պիտի տար ինքզինքնին պարտադրելու: Ռուսիան ալ ընդունեցաւ Կարսի, Արտահանի եւ Արդուիւնի թուրքերուն կողմէ պահուիլը, թէւ ըլլայ ռուսերը ըլլայ հայերը մասնաւորաբար կ'ակնկալէին Կարսի վերատիրացումը: Ազգերու կոմիսարութիւնը, այն ատեն Ստալինի ձեռքին հանրութեան առջեւ արդարացուց այս, այն հիման վրայ որ Կարսը եւ Արտահանը պէտք չէ թուրքիոյ հետ վեճի կիզակէտ ընել, թէ անոնք 67 առ հարիւրով իսլամ էին եւ թէ Հայաստանի անունով թուրքիա ներխուժել, պիտի փաստէր թէ ռուսական համայնավարութիւնը ոչինչ էր, այլ ծայտնալ ռուսական կայսերապաշտութիւնը:

17. Վերի դաշնագրին մէջ Մոսկուա պնդեց թէ պէտք էր ստանար կովկասեան երեք հանրապետութեանց համաձայնութիւնը իրենց վերաբերող տրամադրութիւններուն առընչութեամբ: 13 Հոկտեմբեր 1921ին, կանոնաւորապէս Կարսի դաշնագիրը կնքուեցաւ մէկ կողմէ Թուրքիոյ եւ միւս կողմէ Վրաստանի, Հայաստանի եւ Ազրպէյճանի խորհրդային կառավարութեանց միջեւ եւ միւսը ԽՍՀՄի մասնակցութեամբ: Երկու դաշնագիրներուն միջեւ գտնուող ամիսներու ընթացքին Մոսկուա իր հեղինակութիւնը կեղղոնացուց կովկասեան երեք հանրապետութիւններուն վրայ, բայց քեմալականները բաւական յաջողութիւն ձեռք ձգած էին յոյներու դէմ իրենց պայքարին մէջ Ռուսիոյ դէմ աւելի զօրաւոր դիրք ճշդելու: Անոնք ոչ մէկ նոր զիջում ըրին բայց հաստատում ստացան Պաթումի ինքնավարութեան (եւ ատոր համաձայն ռուսերը արդէն ստեղծած էին ինքնավար Աճարիան) եւ հոն Թուրքիոյ ազատ տարանցումի առանձնաշնորհման: Անոնք նաեւ ստացան բացարձակ հաստատում իրենց իրաւունքին՝ Կարսի վրայ: Իրողութեան մէջ անոնք գործնականին մէջ պարտադրեցին նոր դաշնագիրը, նուաստացած եւ համակերպող ռուսերուն: Եթէ յետոյ, ռուսերը հիմա կ'ըսեն թէ այս դաշնագիրներէն մէկն ու միւսը ճնշումի տակ ստորագրած են, իսկութեան մէջ ըսել կ'ուզեն թէ յուսախար եղած են, երբ անոնք եկած էին բանակցելու երկրորդը, այն յոյսով որ կրնային ճողոպրիլ այն կորուստներէն որ պատերազմի բախտը պարտադրած էր սկիզբը ընդունելու: Հայերուն համար երկու դաշնագիրներն ալ անհամ էին: Անոնք կը յուսային ստանալ Կարսը կամ գէր Սարիղամիշի անտառները կամ Օլթիի պղինձի հանքերը: Ինչպէս եղաւ, Հայաստան շատ տկար ձգուեցաւ եւ հայկական ազգային օճախի մը յոյսը Կովկասի մէջ թուեցաւ թէ անհետացաւ, միաժամանակ Կիլիկիոյ պարպումը ֆրանսացիներէն մարեց բոլոր յոյսերը այդ շրջանին մէջ հայկական օճախի մը: 1921էն 1945ի միջեւ բոլոր տարիներուն Խորհրդային կառավարութիւնը դժգոհութեան նշան մը ցոյց չտուաւ Կովկասեան սահմանին վրայ, այնպէս ինչպէս հաստատուած էր: Ընդհակառակը 1925ին Թուրքիոյ հետ բարեկամութեան դաշնագիր կնքեցին, 1929ին եւ կրկին 1935ին վերանորոգեցին եւ միայն 1945 այդ դրժեցին:

Յեղ եւ զգացում

18. Զանի այժմ գրեթէ հայեր չկան Հայաստանի համար պահանջուած քրքական հողամասին վրայ, պահանջները դժուարաւ կարելի է դնել ազգագրական հիմներու վրայ: Այսուհանդերձ, պէտք է յիշել թէ ասոր պատճառը 1915 եւ 1916 թուականներու ջարդերն ու տեղահանութիւններն են: Մինչ այդ, վեց վիլայեթներուն մէջ շուրջ մէկ միլիոն հայեր կային: Ասոնցմէ 500,000էն մէկ միլիոնի միջեւ անհետացան: 300,000է աւելի փախստականներ Երեւան հասան: Ուրիշներ փախան Սուրիա, եւ ոմանք՝ ի վերջոյ Եւրոպա եւ Ամերիկա: Այսօր շուրջ 60,000 կամ 70,000 հայեր կը մնան Իսթանպուլի մէջ: Թուրքիոյ մէջ, տեղ-տեղ, կան անհատներու փոքր խումբեր, ընդամենը քանի մը հարիւր հոգի, որոնք այս կամ այն ձեւով կարգ մը պարագաներու – որովհետեւ կաթողիկէ էին – ջարդերէ եւ տեղահանութենէ խուսափեցան:

19. Յանուն թուրքերուն պէտք է յիշել թէ զանգուածային գաղթերը այս

սահմանին վրայ յաղթանակի ելեւեջները կը նշեն: 1829ին 120,000 հայեր պարպեցին Կարս եւ Արտահանը ռուսական բանակներուն հետ: 1857ին, Խրիմի պատերազմէն ետք, արեւի հայեր Ռուսիա գաղթեցին, եւ բազմահազարատր խրիմեցի բաթարներ՝ Թուրքիա: 1877ի պատերազմէն ետք 80,000էն 120,000 թուրքեր Կարսի վիլայէթը ձգեցին դէպի Թուրքիոյ ներսերը [անցան]: Բայց ասոնք շատ թէ քիչ կամատր գաղթեր էին, մինչդեռ 1915–16ին թուրքերու կողմէ հայերուն տեղահանութիւնը գործադրուեցաւ բարբարոս պայմաններու տակ. թուրքերը ամուր գետնի վրայ են երբ կը մատնանշեն հակա–ջարդերը որոնք անկասկածօրէն գործադրուեցան հայերու կողմէ թուրքերու եւ քիւրտերու վրայ 1914–16ի ռուսական ներխուժման ատեն, թէւ թրքական գնահատումը–600,000 զոհերու–փաստելը կրնայ դժուար ըլլալ: Անոնք նոյնպէս կրնան շեշտել զանգուածային տեղահանութիւնները եւ ջարդերը, որոնց ենթարկուեցան վրացիները, հայերը եւ ազրայէջանցիները, խորհրդային իշխանութիւններուն կողմէ:

20. Բայց եթէ, Խորհրդային Հայաստանի համար պահանջուած հողամասին մէջ հայեր չկան – համաձայն ընդհանրապէս ընդունուած տեսակէտին, չկան նաեւ շատ թուրքեր, բնակչութիւնը մեծամասնութեամբ քիւրտերէ կազմուած ըլլալուն, որոնց նկատմամբ թուրքերուն թղթածրարը հաւասարապէս սեւ է: Թուրքերը, սակայն, կը պնդեն թէ Ռիլսընեան Հայաստանի մէջ կան 2,000,000 թուրքեր եւ միայն 250,000 քիւրտեր: Անոնք որոշ տրամաբանութեամբ կ'ըսեն թէ Կարսի եւ Ճորոտի(7) (Արդուի) սահմանային երկու վիլայէթներուն մէջ, ուր 1921ին պոլշեիկները պաշտօնապէս ընդունեցին 67 առ հարիւրի իսլամական մեծամասնութիւն մը (պարբերութիւն (6) [այսօր]) կը բնակի ճնշիչ թրքական մեծամասնութիւն մը: Ուրանալով որ քիւրտեր կան Քարա Սու եւ Արագ գետերէն հիւսիս, անոնք միայն կ'ընդունին խառն թրքական եւ քրտական բնակչութիւն [այս գետերէն] հարաւ, Վանի, Մուշի, Արբիի (Պայազիտ) եւ Պիթլիսի վիլայէթներուն մէջ: Ինչպէս որ կը հրատարակուին թրքական վիճակագրութիւնները, նոյնիսկ եթէ անոնք կարելի ըլլայ ընդունիլ իրենց արժէքով, անոնք չեն գնահատեր թուրքերուն եւ քիւրտերուն միջեւ, եւ որ մէկ մասը հաւանական է որ այս կամ այն կողմէն մէջտեղ գայ:

21. Վրացի գիտահետազոտողներուն նամակը ազգագրական հարց չի բարձրացներ: Այսօր Թուրքիոյ մէջ նշմարելի վրացիներ չկան, բացի Ճորոտի վիլայէթէն, յատկապէս քանի մը Աճար գիւղեր Հոփայէն արեւելք, թրքական ծովեզրին արեւելեան ծայրը: Ըստ թրքական կառավարութեան, 1935ին միայն 57325 վրացախօս թուրքեր կային ամբողջ Թուրքիոյ մէջ եւ անոնք թուրք գաղթականներ էին ցարական Ռուսիայէն: Այս ընդհանուր թիւէն 15596 հոգի ըսուած է թէ կ'ապրի Վրաստանէն պահանջուած տարածութեան մէջ եւ մնացեալն ալ ցրուած են գլխաւորաբար Մարմարայի ծովի շրջանին մէջ: ԺԷ. դարուն Ախալցխիսի վրացի իշխանները, որոնք կ'իշխէին երկիրը Ճորոտի կէսին եւ վերին Կուրի շրջանը, իսլամացան եւ շարունակեցին իշխել որպէս ներկայացուցիչները [Բարձրագոյն] Դրան մինչեւ ԺԸ. դարու կէտը: Թրքական քաղաքական ազդեցութիւնը, թրքական լեզուն եւ իսլամական մշակոյթը մեծ յառաջդիմութիւն ըրին այս շրջանին: Գիւղացիները մեծ մասով իսլամացան, բայց իրենց լեզուն մնաց վրացերէն, թէւ երեւելիները կը խօսէին թրքերէն: 1877ին

քրքրե՞նը կը փոխարինէր վրացե՞րե՞նը, եւ Ի, դարու սկիզբին Ղորուհի հովիտի շատ մը գիւղեր ամբողջովին անտեղեակ էին վրացե՞րե՞նի, մինչ քրքական անուններ փոխարինած էին վրացի ընտանեկան անունները:

Իրաական

24. Թուրքերը կրնան վիճիլ թէ հայերէ եւ վրացիներէ պահանջուած հողամասին իրենց գրաւումը ետ կ'երթայ մինչեւ 1071ի սելճուք յաղթանակը Մալազկիրթի մէջ: Բայց Օսմանեան թուրքերու եւ սելճուքներու ինքնութիւնը այնքան ալ յստակ չէ, ոչ ալ սելճուքեան գրաւումը անընդմէջ, որ թուրքերու համար կրնայ ապահով չըլլալ պնդելու 1534էն առաջ եղող չորս դարերուն վրայ, այս թուականին է որ Օսմանեան թուրքերը գրաւեցին հողամասը ամբողջութեամբ, կամ 1580ին՝ երբ անոնք կը պնդեն թէ վերջնականապէս կցած են Արտահանն ու Արդուինը:

25. 1878ին, Պերլինի դաշնագրով Թուրքիան Կարսը, Արտահանը, Արդուինը եւ Պաթումը Ռուսիոյ փոխանցեց:

26. 1916ին Մեծն Բրիտանիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ միջեւ համաձայնուած էր որ յաղթանակի պարագային, Էրզրումի, Պիթիսի եւ Վանի Նահանգները (նաեւ առելի հարաւի քրտական շրջանները) եւ Տրապզոնի վիլայէթը մինչեւ քաղաքէն արեւմուտք կ'ետ մը, պիտի կցուէին Ռուսիոյ կողմէ: Բայց այս ինչպէս ալ ցարական համաձայնութիւններ, դրժուեցան պուշեիկեան կառավարութեան կողմէ:

27. Յարական կայսրութեան անկումէն ետք պուշեիկները կորսնցուցին Կարսը, Արտահանը, Արդուինը եւ Պաթումը Թուրքիոյ եւ պաշտօնապէս զանոնք փոխանցեցին Պրեսթ Լիթովսքի 3 Մարտ 1918ի դաշնագրով (11րդ պարբերութիւն):

28. 1920ի Սեւրի դաշնագիրը կը նախատեսէր Ռիլսընեան Հայաստանի ստեղծումը, բայց մեծ մասամբ շնորհիւ պուշեիկեան թիկունքին, թուրքերը խուսափեցան դաշնագրէն եւ այդ երբեք չվաւերացուեցաւ:

29. Ռուս-քրքական Մոսկուայի 16 Մարտ 1921ի դաշնագիրը, ճշդեց սահման մը որ ձգեց Կարսը, Արտահանը եւ Արդուինը Թուրքիոյ, բայց անգամ մը եւս Պաթումը փոխանցեց Ռուսիոյ (16րդ պարբերութիւն):

30. Ռուս-քրքական-վրացական-հայկական եւ ազրայէճանական 13 Հոկտեմբեր 1921ի Կարսի դաշնագիրը, հաստատեց ռուս-քրքական նախկին համաձայնութիւնը՝ Մարտի (17րդ պարբերութիւն):

31. Լոզանի 1923ի դաշնագիրը, որ փոխարինեց Սեւրի դաշնագիրը, չյիշեց անգամ Վրաստանը եւ Հայաստանը: Խորհրդային Ռուսիան այս դաշնագրին [ստորագիր] կողմերէն մին չէր, բայց քանի իր քաղաքականութիւնը զօրացնել եւ ոչ տկարացնել էր Թուրքիան, կարելի է զինք նկատել որպէս այս թողլքումը [ընդունող]:

32. 1925ին ռուսերը բարեկամութեան եւ ոչ-նախայարձակման դաշնագիր կնքեցին թուրքերուն հետ: Անոնք այդ վերանորոգեցին 1929ին եւ կրկին՝ 1935ին եւ չղաղրեցուցին մինչեւ 1945:

Տնտեսական

33. Խորհրդային Հայաստանը շատ լեռնային երկիր մըն է, հազիւ 200 մղոն երկայնք եւ 60 [մղոն] լայնք ունեցող իր ամբողջ տարածութիւնը 30.000 քառակուսի քիլոմէթր է: Խորհրդային Վրաստանը նոյնքան լեռնային է բայց երկու անգամ անէլի մեծ է: Մինչեւ 1945 ոչ մէկ թելադրութիւն եղած էր թէ Հայաստան յաւելեալ հողամասի պէտք ունէր եւ նոյնիսկ այսօր չէ թելադրուած թէ Վրաստանը այսպիսի կարիք մը ունի: Խորհրդային փրովականտի շէշտը եղած է սոյն երկու խորհրդային հանրապետութիւններու յառաջդիմութեան իրագործումը՝ ճարտարարուեստի, հանգազործութեան եւ հողամշակութեան եւ իրենց ներկայի բարգաւաճումին: Հիմա կը թելադրուի թէ Հայաստան պէտք ունի անէլի ասրելու տարածութեան: Բնակչութեան բաղդատական խտութիւնը հետեւեալ թիւերով ցոյց տրուած է.՝

Իրաքանջիւր քառակուսի քիլոմէթր

Խորհրդային Միութիւն	7
Խորհրդային Ազրպէյճան	37
Խորհրդային Հայաստան	42
Խորհրդային Վրաստան	51
Թուրքիա	22
Չուիցերիա	104
Պելճիքա	275

Խորհրդային Միութենէն դուրս հայերը կը գնահատուին 1-1 1/2 միլիոնի միջեւ: Միջին Արեւելք ասրողներու մօտաւոր գնահատումը հետեւեալն է.՝

Թուրքիա [Իսթանպուլ]	70000
Պարսկաստան (գլխաւորաբար Ատրպատականի մէջ)	60000
Սուրիա	130000
Եգիպտոս	50000
Իրաք	25000
Յունաստան	25000
[ընդհանուր]	360000

Կարելի է ենթադրել թէ Եւրոպայի եւ Ամերիկայի [հայերը] նոյնիսկ անոնք որ Միջին Արեւելքի մէջ եւ մինչեւ հիմա լաւ դիրքերու հասած են, պիտի չհակէին վերադառնալու՝ անէլի ծանր պայմաններու մէջ գտնուող իրենց մայր հայրենիքը: Բայց հայ եկեղեցականութեան միջոցաւ եւ այլապէս, Խորհրդային իշխանութիւնները արտասահմանի հայերու մէջ շարժում մը սկսած են, եւ զանազան վայրերու մէջ քանի մը հազարներ, մասնաւորաբար աղքատներէն, արդէն կը տեղեկագրուի թէ որեւէ պարագայի, հասած են մինչեւ խորհրդային հիւպատոսարանները դիմելու ներգաղթի համար: Խորհրդային Հայաստանի իշխանութիւններն ալ, նոյնպէս, կը տեղեկագրուի թէ կը պատրաստուին ներգաղթողները տեղաւորելու: Անոնք կը յայտարարեն թէ ոչ անէլի քան 350.000 կամ 400.000 կրնան ընդունիլ, բայց նոյնիսկ ենթադրելով թէ մինչեւ կէս միլիոն հոգի արտասահմանէն վերադառնան, բնակչութեան խտութիւնը տակաւին պիտի ըլլար

միայն 59: Մինչ, ուրեմն հողամասերու յաւելումը տնտեսականօրէն ողջունելի պիտի ըլլար Խորհրդային Հայաստանի համար, ոչ մէկ ձեռով անհրաժեշտութիւն մըն է: Այն ինչ կը վերաբերի Վրաստանին ոչ մէկ թելադրանք կայ նման տնտեսական կարիքի մը:

34. Թրքական տեսակետէն Կարսի, Արտահանի եւ Արդուիցի բաղդատաբար փոքր շրջանին կորուստը կենսական պիտի ըլլար, թէւ Անատոլիոյ ամենէն հարուստ արօտավայրերէն ու երկրագործական շրջաններէն է եւ Էրզրումէն ետք ամենէն կարեւոր արեւելեան վիլայեթներ[ն են]: Վրացիներէն պահանջուած արեւի լայն տարածութեան անջատումը պիտի ընդգրկէ Տրապզոնը, միակ արժէք ունեցող թրքական նաւահանգիստը Սեւ ծովու վրայ, եւ առետորի ճանապարհին հոնկէ Պարսկաստան Թաւրիզի վրայով, եւ այս առաջին կարգի տնտեսական հարուած մը պիտի ըլլայ: Ըստ արեւի նուազ կարելի է ակնկալել որ Թուրքիան ենթարկուի Ուիլսոնեան Հայաստանի չափանիշով [հողամասի] կորուստին, որ պիտի ընդգրկէր իր ամբողջ բնակչութեան մէկ տասներկուերորդին կորուստը եւ իր ամբողջ հողամասին մէկ վեցերորդը:

Ռազմագիտական

35. Ռազմագիտական հարցերը թէւ այս ուսումնասիրութեան ծիրէն դուրս են, բայց քանի ԽՍՀՄի ապահովութիւնը առաջադրուած է որպէս պատճառներէն մին Խորհրդային Հայաստանի հողային կցումի [պահանջին], կարելի է դիտել տալ թէ Խորհրդային Միութիւնը կարելի չէ ինքզինք վտանգի սպառնալիքի ենթարկուած նկատել Թուրքիայէն այսօր եւ ոչ ալ հաւանական ըլլայ այս նախատեսելի ապագային մէջ: Թուրքիա թերեւս իր պատմութեան մէջ այսքան տկար եղած չէ Ռուսիոյ բաղդատմամբ: Կարս եւ Արտահանի շրջանները, որոնք նկատուած են որպէս ուսումնի լաստ, որ երրորդ ուժ մը կրնայ գործածել Ռուսիոյ վրայ յարձակումի, անկասկած Ռուսիոյ ապահովութեան ընդունելի յաւելում մը պիտի ըլլար, բայց անոր զիջումը անչափելիօրէն պիտի տկարացնէր Թուրքիոյ պաշտպանութեան դրութիւնը:

36. Թուրքերն ալ, միւս կողմէ, կը պնդեն թէ Կարսի բարձրաանդակը կրնայ ըլլալ ուսումնի լաստ՝ մեծ ուսական արշալի մը, դէպի Միջերկրական [ծով] կամ Պարսից ծոցը եւ թէ այդ վերջին խրամն է ուր իրենք կրնան զսպել ուսական զօրքերը:

37. Կրնայ ըլլալ – լիշէլով թէ ինչպէս 1919ին Թուրքիոյ գլխաւոր պատճառող Հայկական Հանրապետութեան վրայ ներխուժելու, կապ հաստատելն էր Ազրայէյճանի իսլամներուն հետ եւ յետագային այդ հողամասը ներառելու, եւ կասկածելով որ փան-թուրանականութիւնը տակաւին ամբողջապէս չէ ճգնուած Թուրքիոյ կողմէ – Մոսկուան մտահոգ է եւ կ'ուզէ կրկնակիօրէն վստահ ըլլալ որ նման ծրագիր մը երբեք պիտի չիրականանայ:

38. Թերեւս ուսական գլխաւոր նպատակը Արդուիցի շրջանն է, ուր ինչպէս որ է, կան քանի մը վրացիներ եւ լազերը այնքան բազմաթիւ են ինչպէս այլուր: Պաթումի, Անդրկովկասի գլխաւոր նաւահանգիստը, միայն 12 մղոն անդին է թրքական սահմանէն եւ ուրեմն թրքական զենքերու տարողութեան մէջ [է]: Ռուսերուն գոհացում մը պիտի ըլլար եթէ սահմանը Պաթումէն արեւի անդին քշուէր:

Կիլիկիա

39. Պահանջ մը բրքական նահանգներուն, ուր հայերը ընդհանրապէս ապրեցան մինչեւ 1914, կրնայ վստահօրէն պարունակել Կիլիկիան, թէն Կիլիկիան մինչեւ հիմա [հայկական պահանջներուն մէջ] չէ յիշատակուած: Միջնադարեան «Փոքր Հայաստան»ի ժամանակէն ի վեր կիլիկեան դաշտերուն եւ անոր հիւսիս եւ հիւսիս արեւելքը գտնուող լեռներուն մէջ նկատատելի թիով հայեր ապրած են: Հայոց եկեղեցոյ կաթողիկոս մը հաստատուած էր Սիսի (այժմ վերակոչուած Քոզան) մէջ: Ատանա, Մերսին, Անտիոք (Անթաքիա), Այնթապ (Կազի Անթէպ), Մարաշ, Հաճին (Մայիմպէլի), Չէլթուն եւ Քիլիս բազմաթիւ հայեր կը պարունակէին: Այսօր, Մուրիոյ եւ Լիբանանի մէջ 130.000 հայեր կան, որոնցմէ 100.000ը թուրքիայէն գաղթականներ են: Խորհրդային կառավարութիւնը այս ժողովուրդին նկատմամբ հետաքրքրութիւն սկսած է ցուցաբերել եւ աներեւակայելի չէ որ անոնք օր մը օգտագործուին հիմ տալու ոչ-հիմնական պահանջի մը: Թէն հայերուն նման արգասաբեր ցեղ մը չի կրնար չափելի ժամանակաշրջանի մը ընթացքին Միջերկրական [ծով] հասնող Հայաստան մը բնակեցնել, իմաստուն պիտի չ'ըլլար իբրեւ շատ երեւակայական դուրս ձգել կարելիութիւնը պահանջքի մը, որ հեռաւոր թուականի մը ներկայացուի Հայաստանը բերելու Ալեքսանտրէթի ծոցին, այն ամէն ինչով որ այդ ռազմագիտականօրէն կը նշանակէ:

40. Աւելին, վրացի երկու գիտահետազոտողները շատ համեստ չեն խօսելու թէ վրացական հողամասը տարածուած էր մինչեւ Թորոս [Տաւրոսեան] լեռները: Կը թուի թէ ոչ մէկ պատմական արդարացում կայ պնդելու թէ Վրաստան բնաւ երբեք այսքան հարաւ հասած ըլլայ, բայց պնդումը [ինքնին] ցոյց կու տայ Միջերկրականի հանդէպ հետաքրքրութիւն մը:

Քիւրտեր

41. Հայերէ պահանջուած բրքական հողամասը գլխաւորաբար բնակուած է քիւրտերէ, ինչ ալ ըլլայ իրական համեմատութիւնը քիւրտերուն ընդ թուրքերուն (20րդ պարբերութիւն): Հակառակ որ քիւրտերը վստահամբաւօրէն գործածուեցան թուրքերու կողմէ հալածելու եւ ջարդելու համար հայերը, եական հակառակութիւն չկայ քիւրտին եւ հայուն միջեւ: Արդարեւ, 1919ին, հայկական եւ քրտական անկախութեան շարժումներու ներկայացուցիչներ, Փարիզի մէջ, միացեալ քաղաքականութեան մը շուրջ համաձայնեցան: Սերի դաշնագիրին ինքնավար Քիւրտիստանը շիրականացաւ, ինչպէս՝ անկախ Հայաստանը: Հակառակ ասոր, տիրող գաղափարը այն է՝ թէ Հայաստան եւ Քիւրտիստան օր մը կրնան որոշ միութիւն մը իրագործել, միութիւն մը, զոր ԽՍՀՄ կրնայ դեռ իրականացնել փորձել՝ քիւրտերու ներկայութիւնը օգտագործելով, որ կրնայ զոցել պահանջուած հողամասին մէջ հայերուն բացակայութիւնը:

Թրքական դիրքաւորումը

43. Հայկական պահանջներուն բրքական հակազդը բուռն էր: Վարչապետը նշեց թէ Թուրքիան պիտի կռուէր, քան թէ Կարսը, Արտահանը եւ Արդւինը յանձնէր: Մամուլը նշեց՝ 1) Հայերուն բացակայութիւնը այս շրջանէն, 2)

[շրջանին] ռազմագիտական կարեւորութիւնը Թուրքիոյ. 3) 1921ին Խորհրդային կառավարութեան գիշումին ամբողջովին կամաւոր բնոյթը: Երբ վրացական պահանջքը յաջորդեց [հայկականին], հեզմանքով վերաբերեցան եւ այս միայն ծառայեց անլցնելու թուրքերուն բարկութիւնը, եւ կարծրացուց իրենց հաստատականութիւնը:

44. Կարս, Արտահան եւ Արդուին Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ կռուիսնձոր մը եղած են երեք քառորդ դար: Թուրքիան բաւական լաւ կրցաւ շարունակել առանց շրջանին՝ 1878–1918: Եթէ անգամ մը եւս Ռուսիոյ կցելով իրեն պիտի ապահովուի մնայուն բարեկամական յարաբերութիւններ Ռուսիոյ հետ, կարելի է համոզել [Թուրքիան] թէ մնան հեռանկար մը կ'արժէ գինը: Բայց այն պահանջը, զոր հայերը կը բարձրացնեն, միայն Կարսի, Արտահանի եւ Արդուինի համար չէ՝ այլ Ռիլընեան սահմաններուն, եւ վրացիներն ալ այդ հողամասին կէս տարածութիւնն է որ կը պահանջեն: Նոյնիսկ, եթէ մնան մեծ պահանջք մը կ'ըլլայ Կարս, Արտահան եւ Արդուինի անելի փոքր շրջանը ստանալու յոյսով, թուրքերը քիչ ապահովութիւն կրնան զգալ որ Ռուսիան փոքրը առնելէ ետք յետագային անելի մեծ պահանջին քիկունք չկանգնի: Անոնք անկասկածօրէն պիտի կռուին արգիլելու համար մնան անջատում մը:

Եզրակացութիւն

45. Խորհրդային գողները, միշտ կը սիրեն մատնանշել թէ ԽՍՀՄն էր որ ի վերջոյ ազատեց Հայաստանը: Անոնք կատարելապէս իրաւունք ունին [կան ճիշդ են]: Հակառակ տասնամեակներու [ընթացքին] բողոքներուն՝ ներկայացուած [Բարձրագոյն] Դրան, եւ խոստումներուն՝ ինչպէս Պրն. Լոյտ Տորն 1916ին ըրաւ «ապահովել ազատագրութիւնը այս հին ժողովուրդին» Արեւմտեան երկիրները, եւ մանաւանդ Մեծն Բրիտանիան ձախողեցան գործնական բան մը ընել հայերուն համար, երբ առիթը ներկայացաւ 1918ին: Թէեւ ձախողութիւնը արդիւնք էր գործնական անկարողութեան – եւ որ, ինչպէս հայերը վարժ են զանգատելու, անտարբերութեան – իրողութիւնը կը մնայ թէ Խորհրդային հովանաւորութեան տակ էր որ հայ ազգը 1919ին Երեւանի մէջ տիրող մարդկային թշուառութեան, սովի եւ քանդումի խորերէն վերականգնեցաւ եւ հասաւ այսօրուան իր համեմատական բարգաւաճութեան: Մսկկա թերեւս նոյնքան զօրաւոր պատճառ մըն է, որքան ուրիշ մը Խորհրդային Հայաստանի տարածումին՝ Թուրքիոյ հողային վնասով:

46. Անհմաստ պիտի ըլլար աննկատ թողուլ զօրութիւնը հողային հատուցման պահանջքի մը, որ հիմնուած ալ պիտի ըլլայ թուրքերուն կողմէ հայոց վրայ գործադրուած ջարդերուն վրայ: Այս ջարդերը այնքան բարբարոս էին որ աշխարհի յիշողութեան վրայ տեւական հետք մը ձգած են, եւ եթէ Խորհրդային կառավարութիւնը ուզէ քաղաքական պայքարի մը ձեռնարկել այս բոլորը վերյիշելով, շատ հարանականօրէն բաւական համակրանք պիտի ստեղծէ համայն աշխարհի մարդկայնական շրջանակներուն մէջ եւ կրնայ Թուրքիան դնել շատ ձախաւեր դիրքի մը մէջ, իբր Սեւ Ոչխար թիւ 1:

47. Նկատառելի ուրիշ կէտ մըն է հայ ժողովուրդին յատկանշական նկարագիրը: Բնականօրէն խելացի եւ գործօն, բազմաթիւ հայերը, որոնք սահմա-

նափակուած էին Օսմանեան կայսրութեան քաղաքներուն մէջ, ստրկանման գոյութեան մը դատապարտուած էին, ամբողջ ցեղին շահեցնելով բժնող եւ խարդախ անունը, որ տարօրինակ հակասութեան մէջ էր հայ գիղացիին հերոսականութեան, որ կը կոուեր դժուարին պայմաններու դէմ: Հայերը ունին դիմադրողականութիւն եւ հնարամտութիւն, որոնք զիրենք կարող կը դարձնեն ապրուստ մը ճարելու հոն՝ ուր ուրիշներ կը ճախողին: Թուրքերուն [իշխանութեան] տակ ոչ միայն անոնք գերազանցեցին անուտորի մէջ, այլեւ շատեր բարձր պաշտօններու հասան: Կարմիր բանակին մէջ յիսուն հայ զօրավարներ կան եւ 24.850 հայեր շքանշաններով պարգեւատրուած են: Հայերը ջերմօրէն կը բաղձան եւ առաւելագոյնս յարմար են արեւմտականացումի: Յաւալի պիտի ըլլար, եթէ այսպիսի կարողութիւններով լի ժողովուրդի մը զարգացման արգելքներ յարուցուէին ապրելու կենսական տարածութեան պակասին հետեւանքով:

49. Վրացիները եւ հայերը, երկուքն ալ իրենց պահանջները կը հիմնեն արդարութեան վրայ: Թերեւս անելի կարելոր բնութիւն մը ցոյց պիտի տար թէ նման պարագայ մը իրենց համար շահաւոր է թէ ոչ: Ինչպէս վերելք ցոյց տուինք, անելի հողամասը այժմ ոչ մէկ ձեռով հարկաւոր է Հայաստանին կամ Վրաստանին, ոչ ալ պէտք պիտի ըլլայ Հայաստանին, նոյնիսկ եթէ քանի մը հարիւր [հազար] հայեր հասնին արտասահմանէն:

50. Նախքան որեւէ պահանջք ըլլայ Թուրքիայէն հայերու զանգուածային վերադարձի մը հաւանականութեան վրայ, որոշ ձեւի մը գնահատումը պէտք է ըլլայ՝ ա) արտասահմանէն Հայաստան հաստատուիլ ուզող հայերու թիւին, բ) հայերու այն թիւին, զոր Խորհրդային իշխանութիւնները գործնականօրէն պիտի ընդունին: Ի բացակայութեան որոշ փաստի՝ նման մեծածաւալ վերադարձի փափաքին եւ կարողութեան, կը թուի թէ որեւէ հիմք չկայ Թուրքիայէն զոհողութեան պահանջքի: Այժմ կը թուի թէ սխալ եւ անյարմար պիտի ըլլայ թոյլատրել՝ հայերու պատմական [հիմքերով] պահանջքի եւ անելին վրացիներու ստուերոտ պահանջքի շահագործումը անոր համար որ, ոչ անելի կրնայ ըլլայ քան Խորհրդային Միութեան ռազմագիտական առաւելութեան: Ամէն պարագայի եթէ Խորհրդային Միութիւնը կը պահանջէ որ վրացիները այն հողերը ունենան զոր կը պահանջեն, հազիւ թէ կրնայ պնդել որ այս նոյն հողամասը հայերուն երթալու է»:

Ուսումնասիրական բաժանմունք, ֆորէյն օֆիս,

4 Ապրիլ 1946»:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ Զ.Մ.ի Կողմէ

1. Translation of Crown copyright records in the public record office, London, appears by permission of the controller of H. M. Stationary office, F.O. 371/59247:
2. *Նիւ Եորք Թայմզ*ի 4 Յուլիս 1945ի թուին մէջ ամերիկահայ անուանի գրող Լեւոն Չաւէն Միրմէլեանն էր որ նամակով մը թիկունք կը կանգնէր Կարս-Արտասահմանի պահանջքին: Բայց նամակէն միայն տող մը ուշադրութիւնը գրաւած էր Ամերիկայի Բրիտանական դեսպանատան, որ զայն մկրատելով Լոնտոն դրկած էր: Այդ տողը կ'ըսէր. «Կարսի ամբողջ Սովետական Միութեան համար ռազմագիտականապէս

անհրաժեշտ էր»: Գործյն Օֆիսը ուզած էր որ նախ ճշդոյի թէ նամակագիրը Ռիփլըն
Սարոյեանն էր կամ այլ անձ մը: (F.O. 371/48795):

3. Կ'ակնարկէ Մեծն Տիգրանի (95-55 Ք.ա.) նուաճումներուն:
4. Բարբերդ:
5. Մանազկերտ:
6. Խարբերդ:
7. Արոխ:

A BRITISH DOCUMENT GREAT BRITAIN
AND TERRITORIAL CLAIMS DONE IN THE NAME OF
SOVIET ARMENIA AND SOVIET GEORGIA IN 1945
(Summary)

ZAVEN MESSERLIAN

In 1945 when World War II ended the Soviet Union was trying to extend its boundaries to the pre-1914 Imperial Russia's boundaries. The Soviets were successful in extending their boundaries in Eastern Europe and the Far East, but not in the Transcaucasus. On June 7, 1945 the Soviet Foreign Minister told the Turkish ambassador that the Soviet-Turkish Treaty of Friendship will be resumed only if the provinces of Kars, Artahan and Arduin were ceded to the USSR. The reclamation of the said provinces was at first done in the name of Soviet Armenia, then in the name of Soviet Georgia. The issue was raised at the Potsdam Conference and later at the Big Three Foreign Ministers' meeting. The British Foreign Office Research Department prepared three successive documents: "Armenian claims to Turkish territory" (October 5, 1945), "Georgian claims to Turkish territory" (December 22, 1945) and finally "Armenian and Georgian claims to Turkish territory" (April 4, 1946) for the U.K. Delegation in these international conferences. The latter is translated and analysed in this article.